Պաշտոնական ընդդիմախոսի կարծիք

բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ստանալու համար Զինաիդա Բալայանի ներկայացրած <<Արցախը 19-րդ դարի հայ գրականության մեջ>> ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության արդիականությունը ակնհայտորեն պայմանավորված է Արցախի պատմության, աշխարհագրական տարածքի, բնակչության ազգային-քաղաքական կացության, հասարակական-մարդկային հարաբերությունների գեղարվեստական արտացոլման համապատկերը պատմական ժամանակների կտրվածքով համակողմանիորեն ուսումնասիրելու գրականագիտական խնդրի կարևորությամբ: Այդ ուղղությամբ աշխատանքի մի անբաժանելի բաղադրիչն է Արցախը 19-րդ դարի հայ գրականության մեջ հետազոտելու հեղինակի մոտեցումը, որը նա իրականացրել է ատենախոսության վեց գլուխների շրջանակում: Աշխատության մեջ ուշադրության արժանի կողմերից մեկն այն է, որ հեղինակը փորձել է 19-րդ դարի հայ գրականության պատմության համապատկերի և հայտնի գրական օրինաչափությունների տիրույթում ներկայացնել և՛ այս կամ այն չափով ուսումնասիրված թեմայի հետ առնչվող երկերը /օրինակ՝ Ռաֆֆու <<Խամսայի մելիքությունները>>, Մուրացանի <<Ռուզան կամ հայրենասեր օրիորդ>> դրամատիկական երկը, <<Խորհրդավոր միանձնուհի>> վիպակը, Լեոյի <<Մելիքի աղջիկը>> պատմավեպը/, և՛ այնպիսի երկեր, որոնք մասնագետների շրջանակներում թեև հայտնի էին, սակայն հեղինակին հետաքրքրող դիտանկյունից չէին ուսումնասիրվել /օրինակ՝ Ղ.Ալիշանի <<Արցախ>>, Ապրես Բեկնազարյանի <<Գաղտնիք Ղարաբաղի>>, Հայկունու /Հովակիմ Գեղամյանց/ <<Ուղեգնացական ակնարկներ>>, Մակար Բարխուդարյանի <<Արցախ>> երկերը և այլն, և այլն/: Անդրադարձ է կատարվել նույնիսկ Արցախի մասին թարգմանական գրականությանը, նկատի ունենք ռուս գրող Պլատոն Զուբովի <<Ղարաբաղի աստղագուշակը>> վեպի Ռաֆֆու կատարած թարգմանությունը: Ակնհայտ է, որ հետազոտողը իր թեմայի հետ առնչվող նյութի պակաս չի ունեցել, ավելին ուսումնասիրվող նյութի առատությունը նրան մղել է ստեղծել զգալիորեն ծավալուն աշխատանք:

Քանի որ հետազոտողի մտասևեռումը կենտրոնացել է հարազատ Արցախի հետ առնչվող տվյալ ժամանակաշրջանի ընթացքում ստեղծված ողջ հայտնի գրական ու վավերական արժեք ներկայացնող գրավոր նյութը ուսումնասիրելու վրա, ուստի նա որոշակի հանձնառությամբ իրականացրել է իր առջև դրված նպատակամղումը: Իսկ նպատակին հասնելու համար Զ.Բալայանը նյութը համակարգել է՝ ընդհանուր առմամբ առաջնորդվելով գրական-ժանրային ընդհանրությունների սկզբունքով: Կարևորել է ուսումնասիրվող երկերի գաղափարագեղարվեստական նշանակության դերակատարությունը Արցախի պատմաքաղաքական, հասարակական կյանքի ելևէջները ճանաչելու դիտանկյունից, ինչպես նաև ժամանակի հայ նշանավոր գրողների գրչին պատկանելու հանգամանքը հաշվի առնելով: Իր մոտեցումը թեմայի մեկնությանը հեղինակը ներկայացրել է այսպես. <<Թեմայի շրջանակները բավական լայն են, ուստի մենք աշխատանքում որպես խնդրի լուսաբանության առաջին փորձ, նախընտրել ենք առանցքային այն հուշարձանները, որոնք առավել խորությամբ են ներկայացնում Արցախի գրականությունն ու պատմությունը, բնաշխարհագրական պատկերը, ստեղծագործ ոգին>> /<<Ներածություն>>/:

Վերոհիշյալ մոտեցման տեսանկյունից էլ նա նախ անդրադարձել է Ռաֆֆու <<Խամսայի մելիքությունների>> և Ապրես Բեկնազարյանի <<Գաղտնիք Ղարաբաղի>> երկի առնչությունների քննությանը՝ այդ երկերի կառուցվածքի և բովանդակության տարբեր շերտերի զուգադրությունների միջոցով բացահայտելով դրանց համակարգերում իրական-պատմականի և գեղարվեստականի հարաբերակցության ու դրսևորման առանձնահատկությունները: Մեկնաբանությունների այս տիրույթում առավել ուշագրավն ու նորություն պարունակող մասը, ինչ խոսք, Ապրես Բեկնազարյանի <<Գաղտնիք Ղարաբաղի>> գրքի ստեղծման, փոխադրության /ընդունելի չէ գրաբարից աշխարհաբարի փոխադրելը թարգմանություն համարել/, դրա բովանդակության բացահայտմանն ու արժևորմանը նվիրված էջերն են: Հեղինակը փորձում է Ռաֆֆու և Լեոյի սուր քննադատական մոտեցումների հիմնական պատճառները մատնանշել և հիմնավորել <<Գաղտնիք Ղարաբաղի>>-ի բովանդակության մեջ պատմականի և գեղարվեստականի դրսևորումների գրապատմական ու արդիական նշանակությունը, որը նրա կարծիքով հանիրավի մեկ դարից ավելի ժամանակաշրջանում դուրս է մնացել գրականագետների

ուսումնասիրության և ընդհանրապես հետաքրքրությունների շրջանակից: Մինչդեռ Զ.Բալայանը փորձում է մեկնաբանել ու համոզել, վերարժևորել այն՝ վկայակոչելով նաև այլ հետազոտողների դրվատական գնահատումները, որոնք կատարվել են գրքի տպագրությունից մեկ դար հետո, մինչև 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի նորովի անդրադարձները /Բ.Ուլուբաբյան, Մ.Մամիկոնյան, Հր.Բեգլարյան/: Ատենախոսության հեղինակը այս երկի առանձնահատկությունն ու արժանիքները տեսնում է գեղարվեստական հնարքներով վիպականն ու պատմականը երկում հմտորեն միահյուսելու Ա.Բեկնազարյանի ընդունակության մեջ, որի շնորհիվ լայն համապատկերով նկարագրվում են հատկապես 18-րդ դարից մինչև 19-րդ դարասկզբի Արցախի քաղաքական նկարագիրն ու մելիքների բարոյական, ազգային գեղարվեստական պատկերը, հաճախակի կրկնվող պատերազմական իրադարձությունների ողջ բարդությունը՝ կենսական տարբեր ելևէջներով: Անշուշտ, այս երկի բովանդակությունը, դրա <<ամբողջ արժեքավոր նյութը>> թերևս առաջին անգամ է բազմակողմանի մեկնաբանությամբ գիտական շրջանառության մեջ դրվում: Այս երկի նկատմամբ նման առանձնահատուկ վերաբերմունքի շնորհիվ էլ Զ.Բալայանը իր ատենախոսության կարևորագույն խնդիրներից մեկը համարել է դրա արժանիքների բացահայտումն ու վերագնահատումը: Այսպիսի մոտեցումն արդիական նշանակության տեսանկյունից ևս գնահատելի է, որքանով որ նրանում տեսանելի է ներկայանում արցախահայության անկոտրում ոգին, որը արտահայտվել է իր անկախությանը սպառնացող թշնամու դեմ ամենաբազմազան եղանակով հակահարված տալու, կռվելու ընդունակության ցուցադրման շնորհիվ: Այն դրսևորվել է պատմական տարբեր ժամանակաշրջաններում և շարունակվում է իր թվաքանակով իրեն բազում անգամ գերազանցող հակառակորդների դեմ մինչև այսօր:

Հետազոտողն իր նպատակներից մեկն է համարել թեմայի հետ առնչվող գրապատմական ու գեղարվեստական արժեք հանդիսացող իրեն հայտնի ողջ նյութն ուսումնասիրելիս օգտագործել ընդհանուր գիտական և մասնագիտական /ավանդական և ժամանակակից գրականագիտական/ մեթոդների ընձեռած գործիքակազմի հնարավորությունները: Այդ մեթոդական եղանակներից օգտվելով է հետազոտողը շարունակում ուսումնասիրել 19-րդ դարի հայ գրական այն երևույթները, որոնք առնչվում են Արցախի կյանքի տարբեր կողմերի և հատկապես նրա գեղարվեստական

արտացոլման առանձնահատկությունների հետ: Այս տեսանկյունից է նա բացահայտում նաև Մուրացանի ստեղծագործություններում հատկապես արցախյան իրականությունն ու հասարակական կյանքը գեղարվեստորեն պատկերող երկերը /<<Ռուզան>>, <<Խորհրդավոր միանձնուհի>>, <<Բաղտասար Մետրոպոլիտ Հասան Ջալալեանցի համառոտ կենսագրութիւնը>>/: Առաջինի մեջ աշխատանքի հեղինակը փորձել է միահյուսված տեսնել կլասիցիզմի, սենտիմենտալիզմի, ռոմանտիզմի դրսևորումներ, իսկ վերջինի ստեղծման սկզբունքը կենսագրական մեթոդն է համարում:

Գլխավոր թեմայի ուսումնասիրման շրջանակում հետազոտողը կարևոր տեղ է հատկացնում 19-րդ դարում հայ գրականության մեջ ուղեգրության ժանրի միջոցով պատկերված արցախյան իրականությունը /աշխարհագրական տեղանքը, հասարակական-քաղաքական կյանքի առանձնահատկությունները, մշակութային երևույթները, մարդկային բնավորությունները և այլն/: Այս ժանրի շրջանակում կարևորել է Հայկունու, Մ.Բարխուդարյանի երկերը: Հատկապես շատ բարձր է գնահատում Հայկունու /Հովակիմ Գեղամյանց/<<Ուղեգնացական ակնարկներ>>-ը, որը նպաստել է անդրադառնալու Արցախի կյանքի վերաբերյալ բազմազան թեմաների, բանասիրական խնդիրների, արծարծել և պատասխանել ժամանակաշրջանի հուզող քաղաքական, էթնիկական, մշակութային բնույթի հարցադրումների: Հայկունու այս ուղեգրության հիման վրա աշխատության հեղինակը փորձում է վերարժևորել նաև այս գործչի ու հեղինակի ստեղծագործության մեջ եղած դրվատանքի արժանի կողմերը:

Ուշադրության արժանի են նաև Ղ.Ալիշանի, Լեոյի ստեղծագործությունների վերլուծության ուղղությամբ կատարած անդրադարձները: Լեոյի <<Մելիքի աղջիկը>> պատմավեպի ուրույն դիտակետերից քննելու և իմաստավորելու ատենախոսության հեղինակի ջանքերը ուշադրություն են հրավիրում թեմայի մեկնաբանության հանդեպ: Իրեն զգացնել է տալիս վեպի մասին նոր խոսք ասելու ցանկությունը, ինչը կարծում ենք պետք է արդարացված համարել: Մելիք Շահնազարյան մելիքի տիկնոջ՝ Աննա Խաթունի, նրա դուստր Գայանեի, ժողովրդի ներկայացուցչի՝ Մանասի, պղծված հայ աղջիկների, կանանց ու մայրերի մղած մարտերի, անվերապահորեն իրենց ուժերին վստահելու և մանր կռիվներ մղելու իմաստավորումն իբրև Արցախի թշնամիների դեմ նոր տեսակի կռվի փիլիսոփայություն, ինչ խոսք, դրվատելի հետաքրքրություն են առաջ բերում նրա վերլուծությունն ընդհանրապես նկատմամբ:

Գնահատելի է նաև վեցերորդ գլխում արցախյան իրականությունը բանահյուսական նյութի մեջ քննելու և այդ շրջանակում19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի արևելահայ երգիծաբանության թերևս ամենամեծ ներկայացուցչի՝ Կ.Մելիք Շահնազարյանի կյանքի և ստեղծագործության քննաբանությունն ու արժևորումը:

Այսպիսով, ատենախոսության մեջ փորձ է արվել ուսումնասիրել, գրականագիտական և այլ գիտաճյուղերի /պատմագիտություն, մշակույթի պատմություն և այլն/ աջակցությամբ հարաբերական ամբողջության մեջ ներկայացնել 19-րդ դարի հայ գրականության տիրույթում արտացոլված Արցախի կյանքի համակողմանի պատկերը: Օգտագործվել է գրական տարբեր ժանրերով ստեղծված բավականին հարուստ փաստանյութ: Աշխատության մեջ նկատելի են նաև որոշակի թերություններ, որոնք վերաբերում են առանձին երկերի ձգձգված մեկնություններին, պատմաքաղաքական դեպքերի հանգամանալի վերապատմումներին: Կան նաև բառերի ոչ տեղին գործածության օրինակներ կամ թերևս սրբագրական վրիպումներ: Այս ամենով հանդերձ՝ ատենախոսությունը ընդհանուր առմամբ գրված է ԲՈԿ-ի չափորոշիչների պահանջների շրջանակում և այն կարծում եմ կարելի է թույլ տալ, որ ներկայացվի պաշտպանության:

Գագիկ Խաչիկյան

Բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ

ՇՊՀ գիտ. քարտուղար՝ Կ.Պետրոսյան, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ

ք. Գյումրի, 14/12/2021թ.